ՍՄԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ ԵՎ ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 1988 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ՈՐՈՇՈՒՄԸ

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍՍՀ-ՈՒՄ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ-ՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԿՈՊՏՈՐԵՆ ԽԱԽՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՍՄԿԿ Կենտկոմում և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդում Ադրբեջանական ՍՍՀ և Հայկական ՍՍՀ աշխատավորությունից բազմաթիվ բողոքներ են ստացվում ազգային պատկանելության պատճառով աշխատանքից ազատելու կապակցությամբ, որը մասսայական բնույթ է կրում: Հավատի տվյալներ կան այն մասին, որ տնտեսական ու կուսակցական ղեկավարները ոչ միայն հակահարված չեն տալիս մարդկանց հանդեպ այդ հանցավոր ինքնակամությանը, ճնշմանն ու ապառնալիքներին, այլև շատ հաճախ ուղղակի հրահրել են անօրեն գործողությունների, և նույնիսկ անմիջական մասնակցություն են ցույց տալիս դրանց:

ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեն և ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը որոշում են.

Պահանջել Ադրբեջանի և Հայաստանի կոմկուսների կենտկոմներից, Ադրբեջանական ՍՍՀ և Հայկական ՍՍՀ մինիստրների խորհուրդներից, մինիստրություններից ու գերատեսչություններից վճռականապես կանխարգելել քաղաքացիների սահմանադրական իրավունքների կոպտագույն խախտումները, ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները, որպեսզի դրանք այլևս երբեք չկրկնվեն: Ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների, ինչպես նաև կուսակցական ու սովետական մարմինների ղեկավարներին, որոնք թույլ են տալիս ազգային պատկանելության պատճառով աշխատանքից քաղաքացիների անօրեն ազատում, ենթարկել անձնական պատասխանատվության, ընդհուպ մինչև կուսակցությունից վտարումը, զբաղեցրած պաստերից հանումը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում, քրեական պատասխանատվության ենթարկումը:

Նացիոնալիստական և հակաօրինական բնույթի նման դրսևորումների արմատախիլ արման ուղղությամբ աշխատանքը տանել լայն հրապարակայնության պայմաններում: Մեղավոր անձանց հանդեպ ձեռնարկված միջոցների մասին տեղյակ պահել աշխատավորական կոլեկտիվներին, ինչպես նաև մամուլի ու մասսայական ինֆորմացիայի այլ միջոցներով հասցնել հասարակայնության գիտակցությանը:

Սույն որոշման կատարման մասին զեկուցել ՍՄԿԿ Կենտկոմին և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին:

ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի քարտուղար
Մ. ԳՈՐԲԱՉՈՎ

ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ
Ն. ՌԻԺԿՈՎ